

998

✓

206.5
4-21

18 88

0

2010

0

206.5
4-20

ԿԱՆՈՆ

ՄԻԱԲԱԿԱԿԱՆ ՈՒԽՏԻՆ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹԱՌՈՅ

ՄՐԳՈՅ ՅԱԿՈՎՔԵԱՆՑ

Ի ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԵՑ

1888

ՏՊԱԳՐԵԱԼ

Ի ՎԱՆՈ ՄՐԳՈՅ ՅԱԿՈՎՔԵԱՆՑ

206.5
4-21

463

ԿԱՆՈՆ

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՈՒԽՏԻՆ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՐՈՅՑ

ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎՅԵԱՆՑ

Ի ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԵՄ

3625(1007-32562)

ՎԵՐԱՔՆՆԵԱԼ

Թ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՂՈՎՈՅՑ

ԵԿ ԲԱՐԵՓՈԽՄԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԱԼ
ՅԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍԳՈԽԱՆԱԿԱՆ ԱՊՂՈՎՈՅՑ


Ի ՆԻՍ Ը. 18 Մարտ 1888

ԵԿ

ՀՐԱՄԱՅԵԱԼ Ի ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆ

ՅԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. Տ. ՅԱՐՈՒԹԻՒՆ

ՍՐԲՈՉԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԵՒ Կ. ՊՈԼԽՈՅ



1888

2001

40900-44.

ԿԱՆՈՆ

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՈՒԽՏԻՆ

Ա. Ա. ՔԵԼԱԿԱՆ Ա. Թ. Ո. Ո. Ց

ՍՐԳՈՑ ՅԱԿՈՎՔԵԱՆՑ

Ի ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԵՄ

ԳԼՈՒԽ Ա.

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Յօդուած 1. ՍՐԳՈՑ ՅԱԿՈՎՔԵԱՆ Յ
 Միաբանութիւնը կը կաղմուի Սրբոց Յակովքեանց
 Առաքելական Աթոռոց Գահակալ Պատրիարքէն՝
 որ Գլուխ է Միաբանութեան, եւ հետեւեալ
 կարգերէն, որը են՝

Եպիսկոպոսք	Թուով	5
Վարդապետք	"	40
Սարկաւագք	"	12
Դպիրք	"	12
Ժառանգաւոր աշակերտք	"	30
Գրձաղգեաց եղբարք	"	80
Մայրապետ քորք	"	30

23543-60

Ա. ԲՆԴՈՒԽԵԼՈՒԹԻՒՆ ՅԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

Յօդ. 2. Սրբոց Յակովեանց Միաբանութեան անդամ՝ ընդունուելու փափաքով անձն պէտք է գրաւոր ինդիք մատուցանէ Ա. Պատրիարքին։ Խակ ընդունուելու համար պայման է՝ 1. առողջ ըլլալ մարմնով. 2. 16 էն մինչեւ 18 տարեկան հասակաւ՝ եթէ ժառանգաւորաց Վարդարանի աշտկերառութեան կ'ուղէ մանել ներկայացանզ, 18 էն մինչեւ 40 տարեկան՝ եթէ Քրծազգեցից կարգը ընդունուիլ կը փափաքի. և 30 էն մինչեւ 40՝ եթէ Մայրապետ է. 3. բարեբարոց վկայեալ, եւ 4. Միաբանութեան մէջ որ եւ է գործով մը Ա. Աթոռոց ծառայութիւն մատուցանելու կարող և պատրաստական ըլլալ։

Յօդ. 3. Երկրորդ յօդուածոյ մէջ նշանակեալ հանդամնեք մասնաւոր վկայագրով ստուգուելէ, և բժշկական քննութեամբ հաստատուելէ յետոյ՝ Ըստրելիին վարքն ու բարքը եւ յաջողութիւնը հասկցուելու համար Տնօրէն Ժողովոց կողմէն փորձոց կ'ենթարկուի։

Յօդ. 4. Զենի փորձոց, ընտրելիին վկայագրը ընդունելու և փորձոց ժամանակ իր վրայ հսկող Պաշտօնակալին աեղեկագիրը յատենի Տնօրէն Ժողովոց կարգացուելով, եթէ ընդունելութիւնն որոշուի, Միաբանութեան Մայր Տումարին մէջ անունը կ'արձանագրուի, եւ անմիջապէս պաշտօնը սահմանուելով կը յանձնուի Տեսչութեան խնամոց ուժ՝ կը պատկանի։

Յօդ. 5. Եթէ անդամակցութեան խնդրաբեկուն արդէն Եկեղեցական գասէ է, առողջական, բարոյական եւ Եկեղեցական վիճակը կանսնաւոր ըլլալը ստուգուելէ ետեւ՝ « Միաբանութեան կանոնաց հնագանդութեամբ Ա. Աթոռոց հաւատարմաբար ծառայելու » խոստմագիրն առնուելով ձեռքէն, կը վճռուի ընդունելութիւնն Ա. Պատրիարքի հաւանութեամբ եւ Տնօրէն Ժողովոց որոշմամբ։

Բ. ՊԱՐՏՔ ԵՒ ԽՐԱԿՈՒՆՔ ՄԻԱԲԱՆԻՑ

Յօդ. 6. Միաբանք պարտին իւրաքանչիւրն իր կարողութեան չափով ծառայութիւն մատուցանել Ա. Աթոռոց Ա. յն Միաբանը, որ պաշտօնի կը կոչուի, և առանց օրինառոր արժել ունենալու, կը մերժէ զան և կը զլանայ իր ծառայութիւնը, պարտազանց կ'ըլլայ և պատմապարտ։

Յօդ. 7. Միաբանք իրաւունք ունին Ա. Աթոռէն ընդունել, — Ա. Բնակարան, Սնունդ, իսկ Սարկաւագունք, Դպիրք, Ժառանգաւորք և Քրծազգեցք նաեւ հագուստ, և իւրաքանչիւրն, ինչպէս նաեւ Վարդապետք և Եպիսկոպոսունք իրենց անձնական մանր ծափքն հոգալու համար՝ Միաբանական անունով տարեկան մը, որ անձնիւր կարգի եւ աստիճանի յատուկ բաժանում ունի, և Պաշտօնական անունով տարեկան մը, որ իւրաքանչիւր պաշտօնի յատկացած ըլլալով կը տրուի Պաշտօնակալաց, — Բ. Հիւանդութեան ժամանակ Դարձնան, և ծերութեան ժամանակ Խնամք, — Գ. Ումբունք

և Դաստիարակութիւն, անոնք՝ որ յարմարութիւն ունին, և 'ի մասնաւորի անոնք՝ որ Եկեղեցականութեան կը պատրաստուին . . Դ. Եկեղեցական կարգ և Ս. Աստիճան՝ անոնք միայն որ արժանաւորութիւն և դադաս ունին, և որոց զանազան աստիճանի բարձրացումն՝ Լուսարարապետի և Գպրոցաց Տեսչի Տեղեկագրոց վրայ Տնօրէն Ժողովով կ'որոշուի, բաց ՚ի Եպիսկոպոսական աստիճանի բարձրացումն՝, որ Տնօրէն Ժողովոց առաջարկութեամբ Միաբանական Ընդհանուր Ժողովով կ'որոշուի :

Այս որոշումներն կը գործադրուին Ս. Պատրիարքին հաւանութեամբն :

Յօդ. 8. Միաբանք ազատ են իրենց անձնաւ կան դրամով իրենց անձին յատուկ անշարժ կալուած գնելու կամ կառուցանելու, միայն թէ այդ կալուածն եթէ Վաֆֆ գետին է, պէտք է պատկանի միմիայն և անպատճառ Երուսաղեմաց Վաֆֆին, իսկ եթէ զուտ (Ալֆ) Միլլ է. Միաբանք պարախն նախապէս Նէֆի Միլլի Հետման թուլ և կամ օրինաւոր Վաֆֆին ով Վանքին Վաֆֆ ընելով հաստատել ըստ աիրող օրինաց Տէրութեան՝ թէ յետ մահուան Ս. Երուսաղեմաց Աթոռն միակ ժառանգն ու տէրն է այդ կալուածի :

Եթէ Միաբանք ուզեն անշարժ կալուած գնել կամ կառուցանել, կը պարտաւորին կանիսաւ զեկուցանել Ս. Աթոռոյն և կատարել վերոնշանակեալ օրինական գործողութիւններն . Հակառակ պարագայի մէջ պարտազանց կը նկատուին, եւ ըստ այնմ պարտ ու պատշաճը կը տնօրինուի :

Դ. ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹԻՒՆ

Յօդ. 9. Ո՛ր և է Միաբան կրնայ ամբաստանութեան ենթարկութիւ, բայց ամբաստանողը պարտի գրաւոր ներկայացնել իւր ամբաստանութիւնն առ Ս. Պատրիարքն :

Մըրազան Պատրիարքին յանձնարարութեամբ ամբաստանութիւնը կը քննուին եւ կը վճռուին Տնօրէն Ժողովոց մէջ :

Դ. ՀՐԱՋԵԾ Ի ՄԻԱԲԱՆՈԿԱՆ ԿԵՆԱՅ

Յօդ. 10. Ո՛ր և է Միաբան իրաւունք ունի հրաժեշտ տալ Միաբանական կեանքէ հետեւեալ պայմաններով :

Ա. Երբ Միաբանը այնպիսի հիւանդութեան կը կ'ենթարկուի, որ չը ներեր նմա այլ եւս շարունակել Միաբանական կեանքը :

Բ. Երբ Միաբանը արգէն ծառսյութիւն մատուցած է Ս. Աթոռոյն՝ առ նուազն Երեք տարի՝ եթէ ժառանգաւորաց Վարժարանի աշակերտելով ուսմունքն աւարտած է և չէ ուզեր կամ յարմար չէ դատուեր Եկեղեցական կարգը մանելու, և եօթն տարի՝ եթէ Եկեղեցական դասէն է : Այսն պարագայից մէջ ծառայութեան տարիները կը հաշուին ժառանգաւորաց համար՝ Վարժարանէն ենելով Դպրաց կամ Քրծազեցից կարգը մատած օրէն սկսեալ, Եկեղեցականաց համար՝ գտնուած աստիճանն ընդունած օրէն սկսեալ . իսկ դրսէն

Եկած Եկեղեցականներուն համար՝ Միաբանութեան մէջ ընդունուած օրէն սկսեալ :

Յօդ. 11. Ար և միւս պայմաններով հրաժարիլ ուզող Միաբանք խնդրագիր կը մատուցանեն Տնօրէն ճաղովյ, որ պէտք եղած հետազոտութիւնն ընելով, եթէ իրաւացի գտնէ խնդիրը՝ կը վճռէ հրաժարումը :

Յօդ. 12. Հրաժարեալ Միաբանը պարտի իր հաշխաներն ու պաշտօնավարութեան համարը կատարելապէս տալ, և ապա իր անձին սեփական գյորն առնելով բաժնուիլ Միաբանութենէն :

Յօդ. 13. Հրաժարեալ Միաբաններէն անոնք որ կը խնդրեն մնալ միշտ անդամ Միաբանական Ռւխտին Սրբոց Յակովեանց, պարտին խստմնագրով յանձն առնուլ՝ 1. Ս. Աթոռոյ կողմէն որ և է պարագայի մէջ իրենց յանձնարարեալ ծառայութիւնները յօժարակամ կատարել, պայմանաւ, որ սոյն ծառայութիւնք չը պարտաւորեն զիրենք վերստին Միաբանական կենաց լուծին ներքեւ մտնելու՝ յորմէ հրաժարած են, և կարենան համաձայնիլ իրենց վերջէն ընդունած Ազգային հրապարակական պաշտօնի կատարման հետ՝ եթէ ունին . եւ 2. առանց Ս. Աթոռոյ հրամանին Եկեղեցական աստիճանի բարձրացում չընդունիլ, եւ սոյն ժամանակ կ'ստանան վկայագիր մը, որ իրաւունք կուտայ իրենց՝ Ա. ստորագրել միշտ “Ի Միաբանական Ռւխտէն Սրբոց Յակովեանց”, Բ. գալ

վերստին Միաբանական կենաց մէջ մանելու երբ եւ կամին, պայմանաւ՝ որ անարատ ներկայանան բարցագէս և նիւթապէս. և Գ. քուէ ընդունիլ Միաբանական Ընդհանուր ձողավէն՝ Պատրիարքական ընտրելութեան և Աւագ — Լուսարարութեան համար, եթէ ունին օրինական հանդամանք սոյն պաշտօններու ընտրելութեան :

Յօդ. 14. Նախորդ յօդուածոյ համանման տնօրէնութիւն կ'ըլլայ և մի և սոյն իրաւունքը կը տրուի նաև Միաբանութեան այն անդամներուն, որք ծառայութեան պայմանեալ ժամանակը չը լրացուցած (Յօդ. 10) Ա. Աթոռոյն թոյլտուութեամբ պաշտօնի կը կոչուին Ազգային կեդրոնական Վարչութենէն, և յանձն կառնուն խոստմինագրով՝ Ա. Մատուցանել Ա. Աթոռոյ, առվորական պարագայիշ մէջ այն ամեն ծառայութիւնք, որք կը խնդրուին իրենցմէ, և որք չեն հակառակիր իրենց Ազգային նոր պաշտօնին կատարման հետ. Բ. Արդարուոյ կարգի պարագայիշ մէջ ձգել դրսի պաշտօնն եւ դառնալ գալ ՚ Ս. Աթոռոն, երբ Սա անհրաժեշտ կարօտութիւն զգալով կը կօչէ զնոսա առժամապէս իր անմիջական ծառայութեան. եւ Գ. երբ հրաժարի այդ պաշտօնէն անմիջապէս վերադառնալ ՚ Ս. Աթոռոն :

Ե. ԱՐՏԱՔՍՈՒԽՄՆ Ի ՄԻԱԲԱՆՈՒԹԵՆԸ

Յօդ. 15. Այս ամեն Միաբանք, որ կանոնաց անսաստելով անվայել վարք կ'ունենան, կամ

անհաւատարիմ կը գտնուին և կամ առանց օրինաւոր պատճառի իրենց յանձնուած պաշտօնը կը մերժեն կամ խոյս կուտան անկէ , կ'արտաքսուին Միաբանութենէն հետեւեալ պայմաններով :

Ա . Այս տեսակ յանցապարտ Միաբանը՝ նախ իր անմիջական մեծէն յուղութիւն կը յորդորուի երիցո և երիցո , և եթէ անուղղայ մնայ , գանցատագրով կը ներկայուի Տնօրէն ֆողովոյ , որ առ առաւելն մէկ ամսուան մէջ պէտք եղած քննութիւնն ընելով կուտայ իր վճիռը , և յորդոր կամ պատիմ ինչ որ արժան է և պատշաճ՝ ի գործ կը գնէ զնա ի կարգ բերելու :

Բ . Խակ եթէ յանցապարտը դարձեալ շարունակէ իր ընթացքը , Տնօրէն ֆողովը դատաստանաւ կը վճռէ անոր արտաքսումը՝ եթէ Դպիր կամ Քրձաղդեաց կամ Մայրապետէ , և Ա . Պատրիարքը կը գործ ագրէ . իսկ եթէ Եկեղեցական որ՝ մասնաւոր Տեղեկագրութեամբ անոր արտաքսումը կ'առաջարկէ Միաբանական Ընդհանուր ֆողովոյ :

Յօդ . 16. Արտաքսեալ Միաբանը նախ պարտի իր հաշիւն ու համարը կատարելապէս տալ , եւ ապա իր անձին սեփական գոյքն առնելով , հեռանալ Միաբանական Ուխտէն , եւ նաեւ Ա . Երուսաղեմէն՝ եթէ Եկեղեցական կարգէն է :

Յօդ . 17. Այս Միաբաններն՝ որք կամ օրինաւորապէս հրաժարելով Միաբանական կէանքէ , և կամ Ա . Աթոռոյ թուլտուութեամբ Ազգային պաշտօնի կոչուելով , անդամ մնացած են Արքոց

Յակովեանց Ուխտին (Յօդ . 13 , 14) , բայց իրենց խոստմանց գրմելով չեն կատարեր խոստմնագրով յանձնառեալ պայմաններն , և կամ իրենց վարուք եւ գործովը անպատճութիւն կը պատճառեն Ուխտին՝ որպ անդամ են , և յետ երկիցս և երիցս յորդորուելոյ անուղղայ կը մնան , Տնօրէն ֆողովոյ առաջարկութեամբ Միաբանական Ընդհանուր ֆողովոյ կողմէ կ'արտասանուի արտաքսումն եւ Ա . Պատրիարքն կը գործադրէ :

Յօդ . 18. Արտաքսեալ Միաբանից անուններն և պատճառները կը նշանակուին Միաբանութեան Մայր – Տումարին , և առ Ազգային Երեսփոխանական մողով մատուցուած տարեկան տեղեկագրութեան մէջ և Եկեղեցական արտաքսելոց համար ամեն անդամ և անմիջապէս Տեղեկագիր կը տրուի նաեւ Ազգային Պատրիարքարանի և Արարատեան Մայր – Աթոռոյ :

Զ . ՎԱԽՃԱՆ ՄԻԱԲԱՆԻՑ

Յօդ . 19. Ո՞ր և է Միաբան թէ՛ Վանքին մէջ և թէ՛ դուրս օտար երկիր վախճանած ժամանակ , բոլոր գոյքը ՚ի գիր կ'առնուին , եւ հաշիւները տեսնուելով կը կարգադրուին Տնօրէն ֆողովոյ միջոցաւ :

Յօդ . 20. Վախճաննեալ Միաբանից օրինաւոր ժառանգն Ա . Աթոռոն ըլլալով , անոնց գոյքէն Ա . Աթոռոյն և այլոց վերաբերեալ և պատահապէս

Երենց քով գտնուած դրամ՝ անօթ, զգեստ, գիրք և սցլն, իրենց տեղը յանձնուելով, ինչ որ աւելնայ՝ Ս. Աթոռոյն կ'անցնի կանոնաւոր արձանագրութեամբ՝ 'ի յիշատակ անուան նորա : Մի և նյոնը կը գործադրուի նաեւ Լուսարարապետի մահուան ատեն նորա սենեկի և սեփական գոյից նկատմամբ, սակայն անմիջապէս՝ ըստ սովորութեան՝ Տնօրէն ժողովոյ միջոցաւ Ս. Յակովը Աւանդատան դուռը կը կնքուի և բանալիները կնքոյ ներքեւ կը պահուին մինչ ցընսորութիւն և հաստատութիւն նոր Լուսարարապետի : Իսկ Պատրիարքի վախճանման ատեն վախճանելոյն և Պատրիարքարանի գոյից քննութիւնն Միաբանական Ընդհանուր ժողովով ընտրեալ Քննիչ Մասնախսիի մը գործակցութեամբ կը կատարուի (Յօդ. 24) :

Գ Լ Ո Ւ Խ Բ .

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Յօդ. 21. Արբոջ ՅԱԿՈՎԲԵՌՆՑ Առաքեական Աթոռոյ Վարչութիւնը յանձնուած է Երուսաղէմի Ս. Պատրիարքին, որ կը գործէ օրինաց սահմանին մէջ՝ ըստ տրամադրութեան սոյն կանոնագրոյ՝ աջակցութեամբ Միաբանութեան :

Պատրիարք և Միաբանութիւն համարատու են առ Ազգն՝ Կ. Պօլոյ Երեսփոխանական ժողովոյն միջոցաւ :

Ա. ՄՐԲԱՋԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ

Յօդ. 22. Պատրիարքը Արքոց Յակովլեանց Առաքելական Աթոռոյ ցկեանս Գահակալն է, Գլուխ համանուն Միաբանութեան, Նախագահ Միաբանական Ընդհանուր եւ Տնօրէն Ժողովոց և Պետ Գործադիր հշանութեան :

Յօդ. 23. Պատրիարքին պաշտօնն է միանգամացն և պարտաւորութիւնը՝ Միաբանութեան կանոնագրին ճշգիւ հետեւողութեամբ,

Ա. Կառավարել Հայրաբար Միաբանական Ուխտն Արքոց Յակովլեանց, և օր աւուր բարեկարգութեամբ եւ գիտութեամբ առաւել զարգացմանն հոգ տանիլ,

Բ. Տնօրինական Ս. Տեղեաց և այլ Ուխտատեղեաց նկատմամբ Ազգային սեփականութեանց և արտօնութեանց անկորուստ և պայծառ պահուելուն հսկել,

Գ. Ա. Աթոռոյ սեփական Վանօրէից և կալուածոց պահպանութեան եւ բարգաւաճմանն հոգ տանիլ.

Դ. Այս հաստատութեանց շնորհիւ և Ս. Աթոռոյ կարողութեան չափով՝ Ազգային գաստիարակութեան ծաւալմանն օժանդակել.

Ե. Ա. Աթոռոյ Թեմական Ժողովը Առաջնորդական խնամք տանել.

Զ. Եւ՝ իբր միջնորդ Միաբանական յարաբերութեանց, ամենայն Հայոց Կաթողիկոսութեան

պարտ ու պատշաճ մեծարանքն ընծայել առ Մայր - Աթոռն Արարատեան . Ազգային կեդրոնական վարչութեան աջակցութեամբ՝ հսկել Ս . Աթոռոց իրաւանց և պարտեաց վրայ , համաձայն կանոնագրիս եւ Ազգային Սահմանադրութեան . խաղաղութիւն ունենալով հանդերձ ընդ Օտարազգի Քրիստոնեայ Միաբանութիւնս՝ հսկել անկորուստ պահելու Ազգին իրաւունքն և անաղարտ՝ Միաբանութեան պատիւն . անվթար պահել հրովարտակօք շնորհեալ եւ վաւերագրովք հաստատեալ առանձնաշնորհումներն , արտօնութիւններն եւ աւանդական հնաւանդ սովորութիւններն , վայելուչ յարաբերութեամբք թէ ընդ Նախարարս թէ ընդ Բարձրագույն պաշտօնակալս և թէ ընդ Տեղական կառավարութիւնն :

Յօդ . 24 . Երբ Ս . Երուսաղէմի Պատրիարքական Աթոռու որ և է պատճառաւ թափուր մայ , Պատրիարքական Փոխանորդը Տնօրէն ժողովով խորհրդակցութեամբ , Միաբանական Ընդհանուր Ժողով գումարել փութալով՝ ընտրել կուտայ :

Ա . Երեք անձերէ բաղկացեալ Քննիչ Մասնախումբ մը , որ պաշտօն ունի Տնօրէն ժողովով հետ Պատրիարքի գոյքն և ընդհանրապէս Պատրիարքարանի մէջ գտնուած ամեն բան ՚ի գիր առնուլ , և ցուցակաւ Տնօրէն ժողովոյն յանձնելով տեղեկագիր մատուցանել Միաբանական Ընդհանուր Ժողովին , (Յօդ . 19-20) և անմիջապէս տեղեկագրել կեդրոնական Վարչութեան , իսկ Տնօ-

րէն ժողովը Պատրիարքարանը կնքոյ տակ կը պահէ մինչ ցԳահակալութիւն նոր Պատրիարքի , և

Բ . Պատրիարքական Տեղակալը՝ որ քուէից բացարձակ առաւելութեամբ կ'ընտրուի միանուն քուէով , և իր ընտրութեան հաստատութեան պաշտօնագրոյն Կ . Պօլսէն գալէն յետոյ կը վարէ իր պաշտօնը ըստ 25:ր . յօդուածոյ :

Յօդ . 25 . Պատրիարքի վախճանման պատճառաւ ընտրուած Տեղակալին պաշտօնն է Պատրիարքի ընտրական գործողութեանց Նախագահէլ , և մինչեւ ցԳահակալութիւն նորընտիր Պատրիարքի անոր պաշտօնը վարել ըստ կանոնագրի Միաբանութեան :

Յօդ . 26 . Ա . Երուսաղէմի Առաքելական Աթոռոց Պատրիարքն Ազգային Երեսփոխանական ժողովով կ'ընտրուի Միաբանութեան ներկայած ընտրելեաց մէջէն , որոց ցուցակը կը պատրաստուի հետեւեալ կերպիւ .

Նախ՝ Միաբանական Ընդհանուր Ժողովը կը գումարի՝ Միաբանութեան ամբողջ Եկեղեցական անդամոց (Տէս յօդ . 35) կէսէն գէթ մէկ աւելի թուով , ընդ Նախագահութեամբ Պատրիարքական Տեղակալը , որ կը յիշեցնէ ժողովականաց Պատրիարքական Ընտրելիութեան արժանաւորութեան հանգամանքը , և կը հրաւիրէ զնոսա խղճի մտօք կատարել իրենց ընտրութիւնը :

Իւրաբանչիւր ընտրող թղթի մը վրայ կը գրէ ամեն Միաբան Եպիսկոպոսաց և Վարդապէտաց

անունները, պրե երեսուն և հինգ տարին լրացուցած, եւ Ծամանեան Տէրութեան հպատակ ըլլալով, ըստ իւր Խղճի՝ կրօնական, բարոյական եւ ուսումնական բարեմասնութեամբ արժանի են Պատրիարքական Գահը բարձրանալու :

Քուէ համար կը կատարուի սոյն քուէից, եւ առաւելագոյն քուէ ստացող անուններէն քուէից առաւելութեան կարգաւ եօթն անձինք որոշուելով՝ Առաջին յուշակ մը կը պատրաստուի Եօթն ընդուլեցայ :

Ժողովականք երկրորդ անգամ քուէարկութեան կը հրաւիրուին՝ սոյն Եօթն ընդուլեցայ յուշակին մէջն միայն Երեւ անձի վրայ քուէնին ամփոփելու պայմանաւ և քուէ համար կատարուելով Երկրորդ յուշակ մը կը պատրաստուի Երեւ ընդուլեցայ՝ իւրաքանչիւրին ընդունած քուէից առաւելութեան կարգաւ. իսկ եթէ երկու ընտրութեանց ժամանակ հաւասար քուէներ պատահին՝ վլաճակաւ կ'որոշուի Ընտրելին, և սոյն Երեւ ընդուլեցայ յուշակի իւր արժանաւորագունից ընդուլեցայ յուշակ հանդերձ առաջին Եօթն ընդուլեցայ յուշակաւ և իւրաքանչիւր ընտրելոց անցեալ պաշտօնավարութիւնը նկարագրող տեղեկագրով կը ներկայուի Ազգային Երեսվոխանական Ընդհանուր ժողովոց, որ առաջ մէջն կ'ընտրէ զՊատրիարքն Ս. Երուսաղէմի, Կ. Պօլսոյ Պատրիարքի ընտրութեան տրամադրութեան համեմատ :

Յօդ. 27. Նորընտիր Պատրիարքն՝ եթէ Վարդապետ է, Միաբանական Ընդհանուր ժողովը

վկայականով և Կ. Պօլսոյ Պատրիարքի յանձնարարականով Ս. Եղմիածին կ'ուղեւորի, և Եպիսկոպոսութեան աստիճանի կը բարձրանայ, և ՚ի վերադարձին յԱտենի Արքոց Յակովեանց Տաճարին եւ ՚ի ներկայութեան Միաբանական Ընդհանուր Ժողովոց, հանդիսաւորապէս ուխտ ընելով « Հաւատարիմ մնալ Տէրութեան, Ազգին և Ս. Աթոռոյն Երուսաղէմի, և հսկել անթերի գործադրութեան կանոնագրի Միաբանութեան և կը բազմի յԱթոռն Պատրիարքական, և կը տեղեկագրէ առ Ազգային ժողովն իւր Ուխտին կատարումն :

Իսկ եթէ Եպիսկոպոս է, ընդունելով իւր ընտրութեան և հաստատութեան պաշտօնագրերն, կը կատարէ վերցյիշեալ Ուխտին և կը բազմի յԱթոռն Պատրիարքական :

Ս. Եկեղեցեաց մէջ Պատրիարքի անուան յիշատակութիւնը կ'սկսի իր ուխտի կատարումէն անմիջապէս յետոյ :

Բ. ՏՆՕՐԷՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 28. Ծնօրէն ժողովը կը կազմուի՝ Լուսարարապէտէն որ անփոփոխ անդամէ, և պարբերաբար փոփոխելի վեց անդամներէ :

Յօդ. 29. Ծնօրէն ժողովոց անդամէք ըրս տարի պաշտօն վարելու պայմանաւ կ'ընտրուին Միաբանական Ընդհանուր ժողովին, առաջին անգամ՝ Պատրիարքին՝ Լուսարարապէտին հետ պատրաստած կրկնամիւ զանկին վրայ . առաջին ընտրութենէն երկու արքունութեան վեց անդամէ վիճակութեանունուուելու առողջութեան վեց անդամներէ :

կաւ, եւ այնուհետեւ երկու տարին մի անդամ՝
պաշտօնալարութեան քառամեայ շրջանը լրացը-
նող անդամք կը դադրին, որոց տեղը Միաբանա-
կան Ընդհանուր ժողովը նոր երեք անդամներ
կ'ընտրէ Ս. Պատրիարքին՝ մնացեալ անդամոց հետ
պատրաստած կրկնաթիւ ցանկին վրայ :

Թէ՛ վիճակաւ և թէ՛ կարգաւ դադարեալ ան-
դամք վերընտրելի են :

Յօդ. Յօդ. Տնօրէն ժողովը կանոնաւորապէս
շաբաթը երկու՝ իսկ ստիպողական հարկին աւելի
նիստ կ'ընէ, ընդ Նախագահութեամբ Ս. Պատ-
րիարքին և ՚ի բացակայութեան՝ Պատրիարքական
Փոխանորդին : Ժողովը կ'առաջնորդուի իւր Դիւա-
նէն՝ կազմեալ մէկ Ատենապետէ և մէկ Ատենա-
դպրէ, զորս իւր մէջէն կ'ընտրէ երկու տարի
պաշտօն վարելու պայմանաւ :

Յօդ. Յօդ. Տնօրէն ժողովը պաշտօնն է հաւա-
նութեամբ Ս. Պատրիարքի, Ս. Աթոռոյ պաշտօ-
նատարաց կողմէ ներկայուած ձղաւոր և ծանրա-
կշիւ գործերը անօրինել, նախապէս ստանալով
անոնց կարծիքը և դիտողութիւնն .

Ատորակարգեալ պաշտօնէից ընտրութիւնները
կատարել.

Վարչական հրահանգներն և տնօրէնութիւն-
ները սահմանել.

Եւ ՚ի մի բան, տնօրինել այն ամեն գործերն,
որք իւրաքանչյւուր պաշտօնատարի իրաւասութե-
նէն վեր կը դատուին :

Յօդնապէս, Տնօրէն ժողովոյ պաշտաման կը
պատկանի, հաւանութեամբ միշտ Ս. Պատրիար-
քի, Ս. Աթոռոյ վարկը պահելու համար ՚ի հար-
կին փոխառութեան պէտքն ու սրայմանները սահ-
մանել, կալուածական գնումն եւ վաճառումն
ընել, Միաբանից ընդունելութիւնն որոշել, ամ-
բաստանութիւնները քննել, հրաժարում վճռել,
աստիճանի բարձրացման արժանաւորութիւնն
(բայց ՚ի Եսպիսկոպոսներէ) որոշել, եւ ՚ի գէպս
մահուան Միաբանից սեփական գոյից վրայ կանո-
նական տրամադրութիւնն ՚ի գործ դնել:

Յօդ. Յօդ. Տնօրէն ժողովը ամեն ամսադլուխ
պաշտօնէից հաշիւները կը քննէ, չորս ամիսն ան-
դամմը մը Ս. Աթոռոյ ելեւմնից վիճակն ստուգե-
լով հարկաւոր անօրէնութիւնները կ'ընէ, ամեն
տարեգլուխ անցելոյն հաշիւները կը փակէ, եւ
յաջորդին ելմուացցը կանխաւ յարգարելով՝
բացատրական Տեղեկագրութեամբ կը ներկայէ
Միաբանական Ընդհանուր ժողովը :

Յօդ. Յօդ. Տնօրէն ժողովը համարատու է
առ Միաբանական Ընդհանուր ժողովը, որ կը կա-
տարէ համարատուութիւն տարեկան Տեղեկագլո-
րութեամբ, որոյ մէջ ինամով պիտի նշանակէ,

Ա. Միաբանական անդամոց ընդունելութեան,
պաշտօնավարութեան, հաւատարիմ ծառայու-
թեանց համար եղած վարձատրութեանց, ձեռ-
նադրութեանց, հրաժարման և մահուան վերա-
բերեալ տնօրէնութիւնը :

Բ. Միաբանական անդամոց ուսումնական յառաջադիմութեան , եւ ընդհանրապէս Ազգային դաստիարակութեան նկատմամբ գործադրուած միջոցները և արդիւնք նոցին :

Գ. Տնօրինական Ս. Տեղեաց և այլ Ռւխտասեղեաց մէջ Օտարաց հետ ընկերովի և առանձինն Ազգային արտօնութեանց և սեփականութեանց մասին պատահած նշանաւոր գեղքերն և ասոնց նկատմամբ ընդ Ազգային կեդրոնական Վարչութեան , ընդ Տեղական կառավարութեան , ընդ Քրիստոնեայ Օտարազգիս , և ուղղակի ընդ Նախարարու Տէրութեան կամ այլ Պաշտօնակալս տեղի ունեցած յարքերունենք և արդիւնք նոցին :

Դ. Բնոլորեալ տարւոցն Ելմոտական ճշգրիտ վեճակին բաղդատմամբ ենթագրեալ Ելմոտացցի , և ի մասնաւորի փոխաւութեանց և կալուածական գնմանց և վաճառմանց եւ պարտուց վճարման նկատմամբ ի գործ գրուած միջոցներն և արդիւնք նոցին :

Ե. Յաջորդ տարուան ենթագրեալ Ելմոտացցին և Ելեւմոից հաւասարակշուութեան համար որոշուած միջոցներն :

Յօդ. 34. Տնօրէն ժողովոյ անդամիք չեն կրնար ստանձնել այն պաշտօններ , որք իրենց համարառութեան ներքեւ կը գտնուին , ինչպէս նաեւ չեն կրնար միանդամայն Տնօրէն ժողովոյ անդամ և Ընդհանուր ժողովոյ Ատենապետ գտնուիլ :

Իսկ եթէ երբէք ստանձնեն այնպիսի պաշտօն , կը դադրին նայն միջոցին Տնօրէն ժողովոյ անդամկցութենէն :

Գ. ՄիԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Յօդ. 35. Միաբանական Ընդհանուր Ժողովոյ անդամ են Միաբանութեան բոլոր Եկեղեցական անդամներն , մինչեւ ի Սարկաւագունս՝ ի միասին համարեալ :

Յօդ. 36. Ս. Պատրիարքը կը Նախագահէ Ընդհանուր Ժողովոյ , եւ Ս. Աթոռը թափուր եղած ժամանակ՝ Պատրիարքական Տեղակալը՝ Բայց Ընդհանուր Ժողովը իր մասնաւոր Դիւանն ունի Ատենապետ և Ատենադպիր և Փոխանորդներէ կազմեալ , զորս երկու տարի պաշտօն վարելու պայմանաւ կը նարէ իր մէջէն գաղոնի քուէարկութեամբ :

Յօդ. 37. Ընդհանուր Ժողովին կը գումարի , Ա. Կանոնադրապէս ամեն տարեկլուխ (Մայիս) Տնօրէն ժողովոյ համարատուութիւնը առնելու և առ Ազգային Երեսփոխանական ժողովին իր համարը տալու , եւ

Բ. Պատահապէս երբ Ս. Պատրիարքը , կամ Տնօրէն ժողովը մասնաւոր խնդրոյ մը համար հարկ աեսնեն , և կամ Ընդհանուր ժողովոյ Ս. Երուսաղէմի մէջ գտնուող անդամոց մէկ երրորդ մասը բացորոշ խնդրագրով հայցեն անոր գումարումը :

Յօդ. 38. Ս. Պատրիարքը՝ կամ Ս. Աթոռոյ թափուր ժամանակ Տեղակալն , և Ս. Պատրիարքի բայց ակ ցութեան միջոցին Պատրիարքական Փոխա-

Նորդը կը հրաւիրէ զանդամն ՚ի ժողով, ամեն անդամն Օրակարգի խնդիրը գէթ 24 ժամ՝ առաջ դրով ծանուցանելով ամեն մէկուն :

Յօդ . 39. Ա . Երոսաղէմ Գտնուող Միաբանական Ընդհանուր Ժողովը անդամոց թուցն կէսէն մէկ աւելին բաւական է օրինաւոր Ատեան կազմելու և ամեն խնդիր լուծելու և ընտրութիւններն ընելու, բայց ՚ի Պատրիարքական ընտրելեաց, Լուսարարապետի եւ Տեղակալի ընտրութիւններէն՝ որոց համար Ընդհանուր Ժողովը բոլը անդամոց կէսէն գէթ մէկ աւելի անդամոց ներկայութիւնն անհրաժեշտ է :

Յօդ . 40. Միաբանական Ընդհանուր Ժողովը պաշտօնն է,

Ա . Ընտրել Պատրիարքական ընտրելիներն, ինչպէս նաեւ Տեղակալն ու Լուսարարապետն և ըստ 29 ր. յօդուածոյ՝ Ընօրէն Ժողովը անդամներն.

Բ . Միաբանական Վարչութեան և նոյն իսկ իրեն համար մասնաւոր կանոնագրութիւններ հաստատել կամ պայմանեալ ժամանակին բարեփոխել, Ընօրէն Ժողովին առաջարկեալ խնդիրները լուծել, Եպիսկոպոսութեան ընտրելեաց արժանաւորութիւնը քուէարկել, Ընօրէն Ժողովը տեղեկագրին վրայ՝ Միաբանից արտաքսումն արտասանել, և ՚ի զէպս մահուան Պատրիարքի, նորա սեփական և Պատրիարքարանի գոյից վրայ Եղած կանոնական անօրէնութիւնն լոել և վերջապէս Ընօրէն Ժողովին համար առնուլ :

Յօդ . 41. Ամեն տարեգլուխ Միաբանական Ընդհանուր Ժողովը Տնօրէն Ժողովոյ համարատրութեան Տեղեկագրին և Ելմտացոյցն ընդունելով ստուգելէ և վաւերացնելէ յետոյ, իր կողմէն համարատրութեան Տեղեկագրի կուղղէ առ Աղդապային Երեսփոխանական Ժողովին, մի առ մի նշանակելով ՚ի նմին 33 ր. յօդուածին տրամադրութեան համաձայն տարեցն մէջ կատարուած Վարչական, Ընտեսական, Ելմտական, Բարեկարգական տնօրէնութիւններն, ինչպէս նաեւ վերջացեալ տարեց հաշուեկշիռն :

Գ Լ Ո Ւ Խ Գ .

ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՔ ԵՒ ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Ա . Լ Ո Ւ Ս Ա Ր Ա Ր Ա Պ Ե Տ

Յօդ . 42. Լ Ո Ւ Ս Ա Ր Ա Ր Ա Պ Ե Տ Ի Ն պաշտօնն է՝

Ա . Ծնօրինական Ա . Տեղեկաց և այլ Ռւխտատեղեց և բոլոր Եկեղեցեաց մէջ Աստուածային պաշտաման ըստ կանոնաց Եկեղեցւոց կատարուելուն վերատեսչութիւնը, և

Բ . Ա . Աթոռոյն սեփական բոլոր Եկեղեցական անօթոց, զարդուց, զգեստուց, գրեանց, և այլ կահուց և կարասեաց անկորուստ և անեղծ պահպանութիւնը :

Յօդ . 43. Լուսարարապետին հսկողութեան
Ենթարկեալ են՝

Ա . Ի մասին Եկեղեցական պաշտաման, Միա-
բանութեան բոլոր Եկեղեցական անդամներն, և
ի մասնաւորի՝ Ժամօրհնող, Խոստովանահայրը,
Ժամասաց և Ժամարար Վարդապետք, Սարկա-
ւագունք և Դպիրք, Մասագործ և Ժամակոչ, և՝

Բ . Ի մասին Աւանդապահութեան բոլոր Լու-
սարարք և այլ սպասարկուք Եկեղեցւոյ :

Յօդ . 44. Ա. Աթուոյ Աւանդատան մէջ՝
ինչպէս նաև զանազան Ուխտատեղեաց և Ս. Տա-
ճարաց մէջ գտնուած բոլոր Եկեղեցական անօ-
թոց, զարդուց, զգեստուց, դրեանց, և այլ կա-
հուց և կարասեաց մանրապատում Մայր-Տումարն
Ա. Աթուոյ Աւանդատան մէջ պահուելով, Լու-
սարարապետն՝ Միաբանական Ընդհանուր Ժողո-
վավանտրուելէն, և սովորական արարողութեամբ
Աւանդատան բանալին Ս. Գլխադրէն իր ձեռքք
առնելէն ետքը, նոյն Տումարն՝ ինչպէս նաեւ իր
նախորդի մասնաւոր Տումարն Աւանդատան վե-
ճակին հետ բաղդատելով, անոնց մէջ կ'արձա-
նագրէ իր դիտողութիւնըն և կ'ստորագրէ :

Յօդ . 45. Իւրաքանչիւր Լուսարարապետ իր
Ժամանակին համար մասնաւոր ժապաւիննեալ Տու-
մար մը կ'ընդունի Տնօրէն Ժողովէն և անոր մէջ
կ'արձանագրէ մանրամամաբար .

Ա . Ի՞նչ անօթ, զգեստ, զարդ և այն, որ
կը յանձնուի իրեն յԱտենի Տնօրէն Ժողովոյ, և՝

Բ . Ի՞նչ փոփօխութիւն որ հարկ աեսնուի և
Տնօրէն Ժողովոյ սրոշմամբ կը կատարուի Աւան-
դատան մէջ գտնուած անօթոց, զգեստուց, եւ
այն վրայ, (Նորոգութիւն, ձեւի փոփօխութիւն,
ջնջումն, և այն), և ամեն մէկ արձանագրութեան
ներքեւ թէ ինքն կ'ստորագրէ և թէ Տնօրէն Ժո-
ղովոյ դիւնին ստորագրել կուտայ :

Բ . ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՓՈԽԱՇԽՈՐԴ

ՅԵՐՈՒՍԱԼԵՄ

Յօդ . 46. Ա. Պատրիարքը կ'ընտրէ իր Փո-
խանորդն Տնօրէն Ժողովոյ Եպիսկոպոս անդամոց
մէջէն :

Փոխանորդին պաշտօնն է Տնօրէն Ժողովոյ ան-
դամակցութենէ զատ, ըստ հրամանի և հրահանգի
Ա. Պատրիարքին, յարաբերական գործերը անօ-
րինել եւ ի բացակայութեան Ս. Պատրիարքի .
Նախագահէլ Ժողովոյ և ստորագրել պաշտօնա-
գրերն :

Գ . ԵԼԵՒՄՑԻՑ ՏԵՍՈՒՉ

Յօդ . 47. Ելեւմոից Տեսուչը կ'ընտրուի Տնօ-
րէն Ժողովէն և համարատու է նմա, և պաշտօնն
է Ս. Աթուոյ Ելեւմոից կանոնաւոր անտեսու-
թեան և համարակալութեան վերատեսչութիւնը :

Յօդ . 48. Ելեւմոից Տեսուին հսկողութեան
Ենթարկեալ են ինչպէս Հաշուական Դիւնի յա-

տուել պաշտօնեայք, նայնպէս ՚ի մասին հաշուական գործողութեանց՝ բոլոր ստորակարգեալ պաշտօնակալք Միաբանութեան :

Յօդ. 49. Ա. Աթոռոյ Ելեւմուտքը կանխաւ սահմանեալ Ելեւմոացյցին համեմատ կը անօրինուին Ելեւմոական տնտեսութեան զանազան ձիւզերու պաշտօնակալաց ձեռօք, որոց ամենուն գործառնութեանց կանոնաւորութեանը կը հսկէ Ելեւմոից Տեսուչը, եւ չորս ամիսը անդամ մը Ա. Աթոռոյ Ելմոական վիճակը կը ներկայէ Տնօրէն Ժողովոյ :

Յօդ. 50. Ա. Աթոռոյ ամեն տեսակ Ելեւմուտքը սահմանեալ Ելմոացյցին համաձայն կը դանձուին կամ կը վճարուին Ելեւմոից Տեսչին ձեռօք, իսկ Ելմոացյցէ դուրս արտասովոր հասութից գանձումն և ծախուց վճարումն կը լինի Տնօրէն Ժողովոյ մասնաւոր և պատճառաբանեալ որոշմամբ և Ա. Պատրիարքի պաշտօնագրով :

Յօդ. 51. Ա. Աթոռոյ փախառական գործողութիւնք Ելեւմոից Տեսչին ձեռօք կը կատարուին՝ Տնօրէն Ժողովոյ որոշումն եւ Ա. Պատրիարքի պաշտօնագիրն ստանալէ յետոյ :

Յօդ. 52. Ա. Աթոռոյ բոլոր Ելեւմոական գործողութիւնք Կրկնատումարի օրինօք կ'արձանագրուին Հաշուակալի ձեռօք որ՝ ընդ հսկողութեամբ Ելեւմոից Տեսչին՝ կը գործէ և պատասխանատուէ նմա :

Յօդ. 53. Տնօրէն Ժողովոյ մէջ լինելիք ամեն Ելեւմոական տնօրէնութիւնք և հաշուական գործառնութիւնք Ելեւմոից Տեսչին ներկայութեամբ և խորհրդակցութեամբ կը լինին :

Դ. ԴԱՐՊԱՍԼՆԿԱԼ

Յօդ. 54. Դարպասընկալն Դրամինկալ և Տումարակալ Վարդապետներով իբր Դարպասական Յանձնախումբ՝ մէկ տարուան համար Տնօրէն Ժողովէն կ'ընտրուին և ամենն ալ անմիջապէս վերընտրելի են : Ի հարկին Դարպասական Յանձնախմբին օգնականներ կը նշանակուին Ա. Պատրիարքին հրամանաւ :

Յօդ. 55. Դարպասընկալին պաշտօնն է՝ հրսկել ուխտաւորաց պատշաճապէս հիւրընկալուելուն, ընդունել նոցա Դարպասական նուերներն, բռնել անոնց կանոնաւոր հաշվուը եւ գայցեալ արդիւնքն գիտութեամբ Ա. Պատրիարքին՝ Դրամինկալին միջոցաւ յանձնել Ելեւմոից Տեսչին :

Յօդ. 56. Դարպասընկալին հսկողութեան ենթարկեալ են, Դրամինկալ, Տումարակալ եւ Հիւրընկալ Վարդապետք, Աւենեկապանն, Շորապահը և Պղնձապահը :

Ե. ԴՊՐՈՑՈՅ ՏԵՍՈՒԳ

Յօդ. 57. Դպրոցաց Տեսուչը կ'ընտրուի Տնօրէն Ժողովէն և իւր պաշտօնն է՝ Ժառանդապաւորաց

Վարժարանի , Երուսաղէմի Երկուեռ Նախակրթա-
րանաց , Բեթղեհէմի և Յոպէի Վարժոցաց Վե-
րատեսչութիւնը .

Յօդ . 58. Տեսչի Հսկողութեան Ենթարկեալ
Են՝ Ժառանգաւորաց Վարժարանի և Նախակրթ-
արանաց ու Վարժոցներու . Ուսուցիչները Եւ
բոլոր ծառայողները :

Յօդ . 59. Դարրոցաց Տեսուչը , ըստ որոշման
Տնօրէն Ժողովոյ՝ կը տնօրինէ Ժառանգաւորաց
Վարժարանի , Երկուեռ Նախակրթարանաց Եւ
թեմական Վարժոցաց վերաբերեալ գործերն Եւ
խնդիրներն :

Յօդ . 60. Ժառանգաւորաց Վարժարանը կը
կառավարուի Հետեւեալ Հիմնական ծրագրոյն
համեմատ .

Աշակերտք արդէն նախակրթեալք կ'ընդու-
նուին ընտրութեամբ իրը Ժառանգաւորք Եկե-
ղեցւոյ 16 էն մինչեւ 18 տարեկան . մի կողմէն
կ'ուսանին՝

1. Հայաստանեայց Եկեղեցւոյ Վարդապե-
տութիւն .

2. Եկեղեցական իրաւաբանութիւն .

3. Ընդհանուր Կրօնագիտութիւն .

4. Լեզուագիտութիւն – Հայերէն , Տաճկե-
րէն և Գաղղիերէն .

5. Քանակագիտութիւն – Թուաբանութիւն
կատարեալ . Գրահաշիւ և Տարերք Երկրաշափու-
թեան .

6. Պատմութիւն – Սրբազան , Եկեղեցական ,
Ազգային և Արտաքին .

7. Երգեցողութիւն – Զայնագրութեամբ Եկե-
ղեցական և Ազգային .

8. Աշխարհագրութիւն .

9. Տիեզերագրութիւն .

10. Գծագրութիւն և Գեղագրութիւն .

11. Տարերք Բնական Պատմութեան և Գիտու-
թեանց .

Եւ միւս կողմէն՝ կը վարժուին Եկեղեցական
պաշտամանց կանոնաւորապէս Դպրութիւն ընե-
լով Եկեղեցւոյ մէջ , և յետ աւարտման դպրո-
ցական շընանին՝ խախոռով արժանաւորչ հետզհետէ
կը բարձրանան Եկեղեցական աստիճանաց մէջ ,
իսկ մնացեալներն իրենց կարողութեան համե-
մատ զանազան գործերու մէջ կը գործածուին
ըստ կանոնագրի Միաբանութեան :

Զ . ԴիմԱՆԱՊԵՏ

Յօդ . 61. Դիմանապետը Տնօրէն Ժողովէն
կ'ընտրուի , և պաշտօնն է Ճշգութեամբ պատրաս-
տել Ժողովոյ ատենագրութիւնները՝ առաջնոր-
դութեամբ նորա Դիմանին , և եղած որոշմանց
համեմատ պաշտօնական թղթակցութիւններն և
Դիմանական արձանագրութիւններն ընել :

Յօդ . 62. Դիմանատան ամեն կարեւոր գրեր
և արձանագրութիւններ կը պահպանուին կանո-
նաւորապէս ցուցակագրեալ ընդ Հսկողութեամբ
և պատասխանատուութեամբ Դիմանապետին :

Յօդ. 63. Դիւանատան պաշտօնեայք իրենց օրինաւոր պաշտօնավարութեան մասին պատասխանատու են Դիւանապետին :

Ե. ԹԱՐԴՄԱՆ

Յօդ. 64. Թարգմանը Տնօրէն Ժողովէն ընտրուելով իր պաշտօնը կը վարէ ընդ իշխանութեամբ Ս. Պատրիարքին և ընդ հսկողութեամբ Փոխանորդին՝ համաձայն հրահանգաց Տնօրէն Ժողովոյ :

Յօդ. 65. Թարգմանը գործադիր է յարաբերութեանց ընդ Տեղական կառավարութեան, ընդ Օտարազդի Վանօրայս և Պաշտօնեայս, և հսկող է բարեկարգութեան Քրծազգեաց Միաբանից, Ուխտաւորաց և Երուսաղէմի Հայ ժողովրդոց, և միանգամայն անդամ է Կառավարութեան Խառըէն Ժողովոյն՝ յանուն Ս. Աթոռոյ :

Բ. ՏԵՍՉՈՒԹԻՒՆՔ ԿԱԼՈՒԾՈՒՑՈՒՑ

Յօդ. 66. Տնօրէն Ժողովը կ'ընարէ կալուածական բոլոր գործակալներն՝ յԵրուսաղէմ, ի շրջակայս, և ՚ի զանազան գաւառու. յԵրուսաղէմ Վարձընկալի ձեռօք կը հաւաքէ վարձքերը, Շինուածապետի ձեռօք կը կատարէ բոլոր նորոգութեան գործերը. իսկ զրսերը նոյն գործերն կը կատարէ Տեսչաց և Գործակալաց միջոցաւ :

Յօդ. 67. Ամեն ծախք ելնելէն եաքը՝ տարեկան գէլթ 3 առ 100 արդիւնք չը բերող կալուածներն, և հեռաւորութեան կամ այլ պարագայից պատճառաւ կանոնաւորապէս տնաեւսելն դժուարին եղողները՝ (՚ի բաց առեալ անոնք որ չը ծախուելու պայմանաւ կտակեալ են Ս. Աթոռոյ), ծախելու, անոնց տեղ արդիւնաւոր կալուած գնելու, նոր գետին ծախու առնելու, և կամ նոր շէնք շինելու տնօրէնութիւնք Տնօրէն Ժողովոյ իրաւասութեան ներքեւ կը գործադրուին կալուածական Պաշտօնէից ձեռօք և կամ յարմարագատուած այլ եղանակաւ : (Դիւ 31. Տօն?)

Բ. ԹԱՆԴԱՐԱՐԱՆ

Յօդ. 68. Ս. Աթոռոյ Թանգարանը՝ ձեռագիր եւ տպեալ մատեաններով, հնագիտական նիւթերով և Բնական Պատմութեան և Գիտութեանց և Գեղարուեստից վերաբերեալ առարկաներով օժտեալ՝ հանդերձ իւր ընթերցարանով Թանգարանապետի մը տնօրէնութեան ներքեւ կը անտեսուի Ազգին եւ Միաբանական Ուխտին օգտակար ըլլալու եղանակաւ . և Տնօրէն Ժողովը կը հսկէ անոնց ըստ օրինի պահպանութեան եւ դարգացման :

Ճ. ՏՊՐԱՆ

Յօդ. 69. Ս. Աթոռոյ Տպարանը՝ հանդերձ Գրալաճառութեան սենեկով, Տպարանապետի մը

անտեսութեան յանձնուելով, Տնօրէն ժողովը կը հսկէ երկութին ալ կանոնաւորապէս, եւ Աղդին և Միաբանական Ուխտին բարոյապէս և նիւթապէս օգտակար ըլլալու կերպով անտեսուելուն :

Յօդ . 70. Այս սկզբամբ Տպարանապէտը Տնօրէն ժողովյ որոշմամբ, եւ Ս. Պատրիարքի Հրամանաւ կը տալագրէ միայն այն գրքերը որ կրօնից և բարոյականի դէմ ոչինչ չեն պարունակեր և որ՝ (եթէ դուրսէն ծախքը վճարելով ապսպրուած չեն) դիւրամատչելի գնով կրնան չափաւոր ժամանակի մէջ ծախուիլ շահաւոր եղանակաւ :

ԺԱ. ՄԱՏԱԿԱՐԱՐ

Յօդ . 71. Մատակարարը կ'ընտրուի Տնօրէն ժողովէն և պաշտօնն է՝ Ընդհանուր Միաբանութեան անդեան տնտեսութիւնը, զոր կը կատարէ Ելմոացցով նախասահմանեալ եղանակաւ և ողջապահիկ կանոնաց հետեւողութեամբ. իւր հըսկողութեան ենթարկեալ են՝ Ցորենապահը, Մառանապէտը, Խոհարարը, Արշանապէտը, Արքարն և Հացագործը :

Յօդ . 72. Մատակարարը պարտաւոր է իւր պաշտօնին վերաբերեալ բոլոր պարէններն և նիւթերն, ինչպէս նաեւ Եկեղեցեաց ձէթն, ժամանակին որոշեալ չափով և քանակութեամբ առնել և ամպարել, և աշարջութեամբ հսկել կանոնաւորապէս տնտեսուելուն :

ԺԲ. ՀԱՆԴԵՐՁԱՊԵՏ

Յօդ . 73. Հանդերձապէտը կ'ընտրուի Տնօրէն ժողովէն և իւր պաշտօնն է՝ Միաբանութեան տարեկան հագուստը ըստ որոշեալ տարազու եւ քանակութեան պատրաստել, և Հանդերձարանի վերաբերեալ ամեն նիւթերն հոգատարութեամբ պահպանել :

ԺԳ. ԲԺԻՇԿ ԵՒ ԴԵՂԱԳՈՐԾ

Յօդ . 74. Միաբանական հիւանդաց այցելութեան հոգն ու խնամքը՝ Բժիշկին, և Դեղարանի տնտեսութիւնը՝ Դեղագործին կը յանձնուի ընդ հսկողութեամբ Թարգմանին, որ անոնց Ճշդիւ եւ կանոնաւորապէս կատարուելուն պատասխանառու է :

ԺԴ. ՊԱՏՐ. ՓՈԽԱՆՈՐԴԻ Ի ՊՈԼԻՍ

Յօդ . 75. Պատրիարքական Փոխանորդն Ս. Աթոռաց ներկայացուցիչն է ՚ի Կ. Պօլիս, միջնորդ յարաբերութեանց ընդ երկուս Աթոռա Պատրիարքականս, Տեսուչ կալուածոց եւ Գործադիր Պատրիարքական եւ Վարչական յանձնարարեալ Աթոռապատական ամեն գործոց :

Յօդ . 76. Պատրիարքական Փոխանորդն կ'ընտրուի Տնօրէն ժողովէն Ս. Պատրիարքի առաջարկութեամբ, սոյն ժողովէն կ'ընդունի իւր հրահանդն և պատասխանատու է նմա :

ԺԵ . ՏԵՍՈՒԽՉՔ

Յօդ . 77. ՏԵՍՈՒԽՆԵՐՆ Ս . Ա. Թոռոց ներկաւ յացուցիչներն են՝ իրենց պաշտօնավարութեան յատկացեալ տեղուանք , և կը վարուին մասնաւոր հրահանգաց համեմատ , զոր Տնօրէն Ժողովը կուտայ պաշտօնի կոչած ժամանակ :

Յօդ . 78. ՏԵՍՈՒԽՆԵՐՆ ինչպէս նաեւ Փոխանորդն ՚ի կ . Պօլիս , իրենց ՏԵՍՈՒԹԵԱՆ ենթարկեալ Միաբանից և Պաշտօնակալաց (Ժամարար , Ասրկաւագ , Դպիր , Թարգման , Պահակ , Ճապի , և այլն) Պաշտօնավարութեան հսկող և պատասխանատու են :

ԺԶ . ԴՈՒԾԱԿԱԼԻՔ ԵՒ ԳԱՆՉԱՊԵՏՔ

Յօդ . 79. Այն տեղերը , ուր կարելի չէ Միաբանութենէ յատուկ Եկեղեցական ՏԵՍՈՒԽՆԵՐ դնել , պատուաւոր եւ վստահելի աշխարհական գործակալներ կը կարգուին եւ կը հաստատուին որոշմամբ Տնօրէն Ժողովոյ , նոյն վիճակին մէջ եղած Ա . Ա. Թոռոց կալուածոց ՏԵՍՈՒԹԻՒՆը ընելու և իրենց յանձնարարեալ ուրիշ Ա. Թոռոապատկան գործերը կատարելու :

Յօդ . 80. Պանձապետք նոյնպէս կ'ընտրուին Տնօրէն Ժողովին և կը հաստատուին Ա . Պատրիարքի կոնդակաւ , և պաշտօն ունին իրենց գանուած տեղոյն և վիճակացին Եկեղեցեաց մէջ յանուն Ա . Երուսաղէմի շրջագայած դանձանակներու ար-

դիւնքն հասցնել ՚ի Ս . Ա. Թոռոն իրենց տրուած հրահանգաց համեմատ :

ԺԷ . ԱՅՑԵԼՈՒՔ ԵՒ ՆՈՒԻՐԱԿԱՔ

Յօդ . 81. Ա. Ա. ԵԿԵՂԵԸՆՔ և Նուիրակը մասնաւոր պաշտօնակալը են , որ կը զրկուին առժամեայ պաշտօնով , պէտք եղած տեղուանք , և կը վարուին ըստ հրահանգաց զոր կ'ընդունին Տնօրէն Ժողովին պաշտօնի կոչուած ժամանակ :

ԳԼՈՒԽ Դ .

ՎԱՐՉԱԿԱՆ ԲՆԹԱՑՔ

Յօդ . 82. Ա. ՄԵՆ պաշտօնական նամակ և խնդրագիր Ս . Պատրիարքին կ'ուղղուի , որ Դիւանատունը կը յանձնէ յարձանագրութիւն , եւ ապա կը ներկայացնէ պատկանեալ Ժողովին ՚ի տնօրէնութիւն , իսկ այն գրերը որք նախաքննութեան կը կարօտին , Ժողովին ներկայացրնելէ առաջ կը յանձնէ պատկանեալ պաշտօնէին ՚ի նախաքննութիւն :

Յօդ . 83. Թէ Միաբանական Ընդհանուր Ժողովին և թէ Տնօրէն Ժողովին որոշումներն պարունակող գրութիւնք կ'ստորագրուին Ս . Պատրիարքէն , միայն թէ Ընդհանուր Ժողովոյ պաշտօնագիրք պիտի կը են նաեւ Պիտանի ստորագրութիւնն :


Յօդ. 84. Ընդհանուր և Տնօրէն Ժողովոց որոշումներն կը գործադրուին Ա. Պատրիարքի կողմէն համաձայն նոցա արձանագրութեանց և որոշմագրոց, եթէ Ա. Պատրիարքը Տնօրէն Ժողովոց որոշման պարականութիւն գտնուի, երկրորդ անգամ հրաւեր կը կարդայ Ժողովոց անգամ մ'ալ խորհրդածել նոյն խնդրոյն վրայ, և եթէ գարձեալ համայնտիւն ըստ Գոյանայ, խնդիրը կը յանձնէ Միաբանական Ընդհանուր Ժողովոցն և եթէ սորա որոշումն ալ ընդունի և չը գործադրէ, այն ատեն խնդիրն կը տեղեկադրուի առ Ազգային Երեսփոխանական Ժողովին որուն որոշումն պարուաւոր է ընդունիլ և գործադրել:


ԳԼՈՒԽ Ե.

ՎԵՐԱԲԵՆՈՒԹԻՒՆ

Յօդ. 85. Առօն կանոնագիրը վերաբննելի է Ազգային Երեսփոխանական Ժողովով վաւերացման օրէն հաշուելով ըստ տարի եաբը, և վերաքննութիւնը Միաբանական Ընդհանուր Ժողովով կը կատարուի, և Ազգային Երեսփոխանական Ժողովով կը մատուցուի ՚ի վաւերացումն:

Յօդ. 86. Մինչեւ վերաբննեալ կետերուն Ազգային Երեսփոխանական Ժողովով վաւերացումը՝ հին տրամադրութիւնը անփոփոխ ՚ի գործադրութեան կը պահուին:





28

998

0028014

998



